ՎԱՎԵՐԱԳԻՐ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Նախաբան

Հավատքը հավատացյալին առաջնորդում է տեսնելու հանձինս ուրիշի մի եղբոր, որին հարկավոր է աջակցել եւ սիրել։ Աստծո հանդեպ հավատքից, – Աստծո, որ ստեղծել է տիեզերքը, արարածներին եւ բոլոր մարդկային էակներին, որոնք միմյանց համահավասար են Իր Ողորմության համար, – հավատացյալը կանչված է արտահայտելու այս մարդկային եղբայրությունը՝ պահպանելով արարչությունն ու ամբողջ տիեզերքը եւ թիկունք կանգնելով յուրաքանչյուր մարդու, հատկապես ամենակարիքավորներին ու ամենաաղքատներին։ Այս անդրանցական արժեքը որպես մեկնակետ ունենալով, եղբայրության ու ընկերության մթնոլորտում կատարված տարբեր հանդիպումների ժամանակ մենք կիսել ենք ժամանակակից աշխարհի ուրախությունները, տրտմություններն ու խնդիրները՝ գիտական ու տեխնիկական զարգացման, բժշկական ձեռքբերումների, թվային, զանգվածային լրատվության ու հաղորդակցության դարաշրջանի մակարդակով. աղքատության, պատերազմների եւ մեր բազմաթիվ եղբայրների ու քույրերի կրած տառապանքների մակարդակով, որոնք անասելի վշտեր են կրում աշխարհի տարբեր մասերում՝ զենքերի մրցավազքի, սոցիալական անարդարությունների, կաշառակերության, անհավասարությունների, բարոյական այլասերման, ահաբեկչության, խտրականության, ծայրահեղականության եւ բազմաթիվ ա՛յլ պատճառներով։ Այս եղբայրական ու անկեղծ խորհրդակցություններից, որ ունեցել ենք, եւ մարդկային բոլոր էակների համար մի

լուսավոր ապագայի հույսով լի հանդիպումից ծնվել է այս «Մարդկային Եղբայրության Վավերագիրը»։ Անկեղծությամբ ու լրջությամբ շարադրված մի փաստաթուղթ, որ կանչված է լինելու բարի ու ազնիվ կամքի ընդհանուր հայտարարություն, այնպիսին, որ կարող լինի հրավիրելու բոլոր այն մարդկանց, որոնք իրենց սրտում կրում են Աստծո հանդեպ հավատքը եւ մարդկային եղբայրության հանդեպ հավատքը, միավորվելու եւ միասին աշխատելու, որպեսզի այն դառնա առաջնորդ նոր սերունդների համար՝ դեպի փոխադարձ հարգանքի մշակույթը, աստվածային մեծ շնորհի ըմբռնմամբ, որը բոլոր մարդկային էակներին եղբայրներ է դարձնում միմյանց։

***

Հանուն Աստծո, որ բոլոր մարդկային էակներին ստեղծել է իրավունքների, պարտականությունների ու արժանապատվության մեջ հավասար, եւ նրանց կանչել է կենակցելու միմյանց հետ որպես եղբայրներ, բնակեցնելու համար երկիրը եւ նրանում տարածելու համար բարու, սիրո եւ խաղաղության արժեքները։
Հանուն մարդկային անմեղ հոգու, որին Աստված արգելել է սպանել, հաստատելով, որ յուրաքանչյուր ոք, որ մի անձ է սպանում, կարծես ամբողջ մարդկությանը սպանած լինի,

եւ յուրաքանչյուր ոք, որ մարդկային մի անձ է փրկում, կարծես ամբողջ մարդկությանը փրկած լինի։ Հանուն աղքատների, խեղճերի, կարիքավորների եւ անտեսվածների, որոնց Աստված հրամայել է օգնության հասնել, եւ սա որպես պարտականություն է դրվել բոլոր մարդկանց վրա, հատկապես հարուստ ու բարեկեցիկ
յուրաքանչյուր մարդու վրա։ Հանուն որբերի, այրիների, ապաստանածների եւ իրենց տներից ու իրենց երկրներից արտաքսվածների. պատերազմների, հալածանքների եւ անարդարությունների բոլոր զոհերի. տկարների, վախի մեջ ապրողների, պատերազմների ժամանակ գերեվարվածների եւ աշխարհի որեւիցէ մասում կտտանքների ենթարկվածների, առանց որեւէ տարբերակման։ Հանուն այն ժողովուրդների, որոնք կորցրել են ապահովությունը, խաղաղությունն ու համընդհանուր կենակցությունը՝ կործանարար ավերածությունների ու

պատերազմների զոհ դառնալով։ Հանուն «մարդկային եղբայրության», որ վերաբերվում է բոլոր մարդկանց, միավորում է նրանց եւ նրանց դարձնում է
միմյանց հավասար։ Հանուն այս եղբայրության, որ բզկտվում
է ինտեգրալիստական ու բաժանարար քաղաքականություններով, անհավասարակշիռ շահ որոնող համակարգերով, իդեոլոգիական անմարդկային հակումներով,
որ մանիպուլիացիաների են ենթարկում մարդկանց գործերն ու ճակատագրերը։ Հանուն ազատության, որն Աստված պարգեւել է բոլոր մարդկային էակներին, ստեղծելով նրանց ազատ եւ ազատությունը հաստատելով որպես նրանց բնորոշ ու տարբերակող հատկություն։ Հանուն արդարության ու ողորմածության, որոնք բարեկեցության ու բարգավաճման հիմքերն են եւ հավատքի սյուները։ Հանուն երկրագնդի բոլոր անկյուններում ներկա բարի կամքի տեր բոլոր մարդկանց։ Հանուն Աստծո եւ այս ամեն ինչի, Ալ-Ազհար ալ-Շարիֆը – Արեւելքի ու Արեւմուտքի մահմեդականների հետ – ,
Կաթողիկե Եկեղեցու հետ միասին – Արեւելքի ու Արեւմուտքի կաթողիկեների հետ – , հայտարարում են, որ իբրեւ ճանապարհ որդեգրում են երկխոսության մշակույթը, իբրեւ վարք՝ ընդհանուր համագործակցությունը, իբրեւ մեթոդ ու չափանիշ՝ փոխադարձ ճանաչողությունը։ Մենք, որ հավատում ենք Աստծուն, Նրա հետ վերջնական հանդիպմանը եւ Նրա Դատաստանին, մեր կրոնական ու բարոյական պատասխանատվությունից մեկնելով եւ այս Վավերագրի միջոցով՝ պահանջում ենք ինքներս մեզնից եւ աշխարհի Ղեկավարներից, միջազգային քաղաքականության եւ համաշխարհային տնտեսության ուղղորդողներից, լրջորեն հանձն առնել՝ տարածելու հանդուրժողականության, կենակցության եւ խաղաղության մշակույթը. Հնարավորինս արագ կերպով միջամտելու՝ կանգնեցնելու անմեղ արյան հեղումը, եւ վերջ դնելու պատերազմներին, ընդհարումներին, շրջակա միջավայրի աղտոտմանը եւ մշակութային ու բարոյական անկմանը, որն աշխարհը ներկայումս ապրում է։

Դիմում ենք մտավորականներին, փիլիսոփաներին, կրոնի այրերին, արվեստագետներին, լրատվության ոլորտի աշխատակիցներին եւ մշակույթի գործիչներին աշխարհի բոլոր մասերում, որպեսզի վերաբացահայտեն խաղաղության, արդարության, բարու, գեղեցկության, մարդկային եղբայրության ու համընդհանուր կենակցության արժեքները, եւ հաստատեն այդ արժեքների կարեւորությունը որպես փրկության խարիսխ բոլորի համար, եւ ջանան տարածել դրանք ամենուր։ Սույն Հայտարարությունը, մեր ժամանակակից իրականության շուրջ խորաթափանց մտորումներից մեկնելով, դրա հաջողությունները գնահատելով եւ ցավերը, չարիքներն ու

աղետները ապրելով, հաստատապես հավատում է, որ արդի աշխարհի ճգնաժամի ամենակարեւոր պատճառներից են մարդկային խղճի ու գիտակցության թմրածությունը եւ կրոնական արժեքներից հեռացումը, ինչպես նաեւ անհատապաշտության եւ նյութապաշտական փիլիսոփայությունների գերակշռումը, որոնք աստվածացնում են մարդուն եւ գերագույն ու անդրանցական սկզբունքները փոխարինում են աշխարհիկ ու նյութական արժեքներով: Մենք, ճանաչելով հանդերձ այն դրական քայլերը, որ մեր արդի քաղաքակրթությունը կատարել է գիտության, տեխնոլոգիաների, բժշկության, արդյունաբերության եւ բարեկեցության ոլորտներում, հատկապես զարգացած Պետություններում, ընդգծում ենք, որ այդ մեծ ու գնահատելի, պատմական առաջընթացի հետ միասին իրականանում է վարքագծային բարոյականության փչացում, որով պայմանավորվում է միջազգային գործելաոճը, եւ հոգեւոր արժեքների ու պատասխանատվության գիտակցության տկարացում: Այս ամենը նպաստում է անբավարարվածության, միայնության ու հուսահատության մի համընդհանուր զգացողություն տարածելուն, շատերին հասցնելով ընկնելու կա՛մ աթեիստական ու ագնոստիկական էքստրեմիզմի հորձանքի, կա՛մ էլ կրոնական ինտեգրալիզմի, կույր էքստրեմիզմի ու ֆոնդամենտալիզմի մեջ, այդպիսով ա՛յլ անձանց եւս մղելով հանձնվելու՝ անհատական ու հավաքական կախվածությունների ու ինքնառչնչացման
դիմաց: Պատմությունը ցույց է տալիս, որ կրոնական ու ազգայնական էքստրեմիզմը եւ անհանդուրժողականությունը աշխարհում – եւ՛ Արեւմուտքում, եւ՛ Արեւելքում – ծնել են այն, ինչը կարելի է անվանել նախանշանները «մաս-մաս

կատարվող երրորդ համաշխարհային պատերազմի». նախանշաններ, որ աշխարհի տարբեր մասերում եւ ողբերգական տարբեր իրավիճակներում սկսել են ցույց տալ իրենց դաժան դեմքը. իրավիճակներ, որոնց վերաբերյալ ճշգրիտ կերպով հայտնի չէ, թե քանի զոհ են տվել, քանիների են այրի ու որբ դարձրել: Սրանցից բացի, կան ուրիշ տարածաշրջաններ, որ պատրաստվում են թատերաբեմ դառնալու նոր ընդհարումների համար, ուր ծնվում են լարվածության օջախներ եւ կուտակվում են զենքեր ու զինամթերքներ, մինչ աշխարհում տիրում է անորոշության, հուսախաբության եւ ապագայի հանդեպ վախի մթնոլորտը, եւ ամեն բան հսկվում է տնտեսական կարճատես շահերի կողմից: Նաեւ հաստատում ենք, որ քաղաքական ուժգին ճգնաժամերը, անարդարությունը եւ բնական պաշարների արդարացի բաշխման բացակայությունը – որոնցից օգտվում է միայն հարուստների մի փոքրամասնություն, ի վնաս երկրի ժողովուրդների մեծամասնության – ծնել են եւ շարունակում են ծնել հիվանդների, կարիքավորների ու մահացողների մի վիթխարի քանակ, պատճառ հանդիսանալով մահացու ճգնաժամերի համար, որոնց զոհ են դառնում տարբեր երկրներ, թեեւ տիրապետում են բնական հարստությունների եւ երիտասարդ սերունդների մարդկային պաշարների, որոնցով իրենք բնորոշվում են: Նման ճգնաժամերի դիմաց, որոնք մահվան են հասցնում արդեն իսկ մարդկային կմախքների վերածված միլիոնավոր երեխաների – որոնք այդ վիճակին են հասել աղքատության ու սովի հետեւանքով – , տիրում է մի անընդունելի միջազգային լռություն: Այս առումով ակնհայտ է, թե քանիցս էական է ընտանիքը, որպես հասարակության եւ մարդկության հիմնական կորիզ, ծնելու համար զավակներ, մեծացնելու եւ դաստիարակելու համար նրանց, նրանց ավանդելու համար ամուր բարոյականություն եւ ընտանեկան պաշտպանություն: Հարձակվել ընտանեկան ինստիտուտի դեմ, արհամարհելով այն կամ կասկածելով նրա դերի կարեւորությանը, մեր

դարաշրջանի ամենավտանգավոր չարիքներից մեկն է։ Վկայում ենք նաեւ, որ մեծագույն կարեւորություն ունի կրոնական զգացողության վերազարթոնքը եւ նոր սերունդների սրտում այն վերստին կենդանացնելու ու ոգեւորելու անհրաժեշտությունը, առողջ կրթության եւ բարոյական արժեքներին ու կրոնական արդար ուսուցումներին հարելու միջոցով, դիմադրելու համար անհատապաշտական, եսապաշտական, բախումներ ստեղծող հակումներին, կույր

ռադիկալիզմին ու էքստրեմիզմին՝ դրանց բոլո՛ր ձեւերի ու դրսեւորումների մեջ։ Կրոնների առաջին ու ամենակարեւոր նպատակը Աստծուն հավատալն է, Նրան պատվելը եւ բոլոր մարդկանց հորդորելը՝ հավատալու, որ այս տիեզերքը կախում ունի մի Աստծուց, որ կառավարում է այն, Արարիչն է, որ մեզ ստեղծել է Իր աստվածային Իմաստությամբ եւ մեզ տվել է կյանքի պարգեւը, որպեսզի պահպանենք այն։ Մի պարգեւ, որը ոչ ոք իրավասու չէ խլելու, սպառնալու կամ իր քմահաճույքի համաձայն ձեւափոխելու ու խեղելու, այլ ընդհակառակը՝ բոլորը պարտավոր են կյանքի այդ պարգեւը պահպանելու ու խնամելու, նրա սկզբից մինչեւ բնական մահը։ Ուստի դատապարտում ենք բոլոր այն գործողությունները, որոնք սպառնում են կյանքին, ինչպիսիք են ցեղասպանությունները, ահաբեկչությունները, բռնի տեղահանումները, մարդկային օրգանների ապօրինի վաճառքը, աբորտն ու էվթանազիան, եւ քաղաքական այն հոսանքները, որոնք պաշտպանում են այս բաները։ Ինչպես նաեւ հայտարարում ենք – անվարա՛ն կերպով – , որ կրոնները երբեք չեն մղում պատերազմի եւ չեն հրահրում ատելության, թշնամանքի, ծայրահեղականության զգացումներ, ո՛չ էլ հորդորում են բռնության կամ արյունահեղության։ Այս չարիքները կրոնական ուսուցումներից շեղվելու արդյունքն են, կրոնների քաղաքական օգտագործման պտուղն են, ինչպես նաեւ կրոնական այրերի որոշ խմբավորումների կողմից տրված մեկնաբանությունների, որոնք – պատմության որոշ ժամանակահատվածներում – չարաչար կերպով են գործածել այն ազդեցությունը, որը կրոնական զգացողությունն ունի մարդկանց սրտերի վրա, մղելու համար նրանց կատարելու բաներ, որոնք ոչ մի աղերս չունեն կրոնի ճշմարտության հետ, այլ՝ իրագործելու համար քաղաքական ու տնտեսական աշխարհային ու կարճատես նպատակներ։ Այս իսկ պատճառով, մենք բոլորից պահանջում ենք դադարեցնել կրոնների օգտագործումը ատելության, բռնության, կույր ծայրահեղականության ու ֆանատիզմի հրահրման նպատակներով, եւ Աստծո Անունն այլեւս չգործածել արդարացնելու համար մարդասպան, աքսորի, ահաբեկչության ու հարստահարման գործողությունները։ Սա պահանջում ենք Աստծո հանդեպ մեր ընդհանուր հավատքից մղված. Նա մարդկանց չի ստեղծել սպանվելու կամ միմյանց միջեւ բախվելու նպատակով, եւ ո՛չ էլ՝ որպեսզի կտտանքների ենթարկվեն կամ ստորացվեն իրենց կյանքում եւ իրենց գոյության մեջ։ Արդարեւ, Աստված՝ Ամենակալը, կարիքը չունի,

որ ինչ որ մեկը պաշտպանի Իրեն, եւ չի ցանկանում, որ Իր Անունը գործածվի մարդկանց ահաբեկելու համար։ Այս Վավերագիրը, նախորդ Միջազգային Վավերագրերի հետ համաձայնությամբ, որոնք ընդգծել են կրոնների դերի կարեւորությունը համաշխարհային խաղաղության կերտման գործում, վկայում եւ հաստատում է հետեւյալը. - Անսասան համոզվածությունը, որ կրոնների ճշմարիտ ուսուցումները հորդորում են խարսխված մնալ խաղաղության արժեքներին. խրախուսել փոխադարձ ճանաչողության, մարդկային եղբայրակցության եւ

համընդհանուր կենակցության արժեքները. Երիտասարդների մեջ վերահաստատել իմաստությունը, արդարությունն ու սերը, եւ վերարթնացնել կրոնականության զգացումը, նոր սերունդներին պաշտպանելու համար նյութապաշտական մտածողության տիրապետությունից, չափ չճանաչող շահն ու անտարբերությունը առաջ մղող քաղաքականությունների վտանգից, որոնք հիմնվում են ուժի օրենքի, այլ ո՛չ թե՝ օրենքի ուժի վրա։

- Ազատությունը յուրաքանչյուր անձի իրավունքներից է. յուրաքանչյուր ոք վայելում է հավատքի, մտքի, արտահայտվելու եւ գործելու ազատություն։ Կրոնի, գույնի, սեռի, ցեղի եւ լեզվի պլուրալիզմն ու տարբերությունները աստվածային իմաստուն կամքի արտահայտությունն են, որով Աստված ստեղծել է մարդկային էակներին։ Աստվածային այս Իմաստությունն այն ակունքն է, որից սերում է հավատքի ազատությունը եւ տարբեր լինելու ազատությունը։ Այս իսկ պատճառով, դատապարտվում են այն դեպքերը, երբ մարդկանց հարկադրում են հարելու կրոններից կամ մշակույթներից ինչ որ մեկին, ինչպես նաեւ՝ երբ փորձ է կատարվում պարտադրելու քաղաքակրթական մի ոճ, որն ուրիշները չեն ընդունում։

- Ողորմածության վրա հիմնավորված արդարությունը այն ճանապարհն է, որով հարկավոր է անցնել՝ հասնելու համար արժանապատիվ կյանքի, որի իրավունքն ունի մարդկային յուրաքանչյուր էակ։

- Երկխոսությունը, փոխադարձ հասկացողությունը, հանդուրժողականության, ուրիշի ընդունելության եւ մարդկային էակների միջեւ կենակցության մշակույթի տարածումը նշանակալի կերպով կնպաստի տնտեսական, սոցիալական, քաղաքական եւ բնապահպանական բազմաթիվ խնդիրների նվազեցմանը, որոնք պաշարման մեջ են պահում մարդկության մեծ մասին։ - Հավատացյալների միջեւ երկխոսությունը նշանակում է հանդիպել միմյանց՝ հոգեւոր, մարդկային եւ սոցիալական համընդհանուր արժեքների վիթխարի տարածության մեջ, եւ այն ներդնել ի սպաս բարոյական ամենաբարձր առաքինությունների տարածման, որոնք խրախուսվում են կրոնների կողմից. նշանակում է նաեւ խուսափել անօգուտ վիճաբանություններից։

- Պաշտամունքի վայրերի պաշտպանությունը

– տաճարների, եկեղեցիների ու մզկիթների – մի պարտականություն է, որ երաշխավորվում է կրոնների, մարդկային արժեքների, միջազգային օրենքների ու համաձայնագրերի կողմից։ Պաշտամունքի վայրերի վրա հարձակվելու կամ ահաբեկչությունների, պայթեցման ու քանդման միջոցով սպառնալիքի ենթարկելու որեւէ փորձ, միջազգային իրավունքի ակնհայտ խախտում լինելուց բացի, նշանակում է նաեւ շեղվել կրոնական ուսուցումներից։

- Գարշելի ահաբեկչությունը, որ սպառնում է անձանց ապահովությանը, լինի Արեւելքում, թե Արեւմուտքում, Հյուսիսում, թե Հարավում, տարածելով խուճապ, սարսափ ու հոռետեսություն, կրոնից չի ծնվում, – թեեւ ահաբեկիչներն այն գործածում են որպես գաղափարախոսական գործիք,

– այլ՝ հետեւանքն է կրոնական գրությունների դարերի ընթացքում կուտակված սխալ մեկնաբանությունների, սով, աղքատություն, անարդարություն, կեղեքում տարածող զոռոզամիտ քաղաքականությունների։ Այս իսկ պատճառով, անհրաժեշտ է դադարեցնել ահաբեկչական շարժումներին տրվող օգնությունները՝ փողով, զենքով, ծրագրերով կամ արդարացումներով, ինչպես նաեւ եթեր տրամադրելով, եւ այդ ամենը նկատել որպես միջազգային ոճրագործություններ, որ սպառնում են համաշխարհային ապահովությանն

ու խաղաղությանը։ Հարկավոր է դատապարտել նմանատիպ ահաբեկչություններն իրենց բոլոր ձեւերով ու դրսեւորումներով։
- Քաղաքացիություն հասկացողությունը հիմնվում է իրավունքների ու պարտականությունների հավասարության վրա, որի հովանու ներքո բոլորը վայելում են արդարությունը։ Այս իսկ պատճառով հարկավոր է գործի լծվել՝ մեր հասարակություններում հաստատելու համար լիակատար քաղաքացիության հասկացողությունը եւ հրաժարվելու համար փոքրամասնություններ եզրի խտրական գործածումից, որն իր հետ բերում է կղզիացած ու ցածրակարգ լինելու զգացողության սերմերը, ինչն էլ իր հերթին հող է պատրաստում թշնամությունների ու տարաձայնությունների համար, եւ կրոնական ու քաղաքացիական ձեռքբերումներից ու իրավունքներից զրկում է քաղաքացիներից ոմանց, նրանց տարատեսական խտրականությունների ենթարկելով։
- Արեւմուտքի ու Արեւելքի միջեւ հարաբերությունը փոխադարձ անվիճելի անհրաժեշտություն է, որ չի կարող փոխարինվել եւ ո՛չ էլ անտեսվել, որպեսզի երկուսն էլ կարողանան փոխադարձաբար հարստանալ մյուսի քաղաքակրթությամբ, մշակույթների փոխանակման ու երկխոսության միջոցով։ Արեւմուտքը կարող է Արեւելքի քաղաքակրթության մեջ դարմաններ գտնել իր հոգեւոր ու կրոնական որոշ հիվանդությունների համար, որոնք առաջացել են նյութապաշտության տիրապետության պատճառով։ Իսկ Արեւելքը կարող է Արեւմուտքի քաղաքակրթության մեջ բազմաթիվ տարրեր գտնել, որոնք իրեն կարող են օգնել փրկվելու տկարությունից, բաժանումներից, բախումներից եւ գիտական, տեխնիկական ու մշակութային անկումից։ Կարեւոր է ուշադրություն դարձնել կրոնական, մշակութային եւ պատմական տարբերություններին, որոնք էական տարր են արեւելյան ինքնության, մշակույթի ու քաղաքակրթության ձեւավորման գործում. եւ կարեւոր է ամրապնդել մարդկային ընդհանուր ու հասարակաց իրավունքները, նպաստելու համար արժանապատիվ կյանք երաշխավորելուն բոլոր մարդկանց համար Արեւելքում եւ Արեւմուտքում, խուսափելով երկակի չափանիշներ կիրառող քաղաքականության գործածումից։ - Հարկավոր անհրաժեշտություն է ընդունել կանանց իրավունքը՝ կրթության, աշխատանքի, քաղաքական սեփական իրավունքների կիրառման։ Ինչպես նաեւ հարկավոր է աշխատանք տանել՝ ազատելու համար կանանց պատմական ու սոցիալական այն ճնշումներից, որոնք հակառակ են նրանց սեփական հավատքին ու սեփական արժանապատվությանը։ Հարկավոր է նաեւ պաշտպանել նրանց սեռական շահագործումից եւ որպես ապրանք կամ հաճույքի գործիք կամ տնտեսական շահ նկատվելուց։ Սրա համար հարկավոր է դադարեցնել բոլոր անմարդկային գործողություններն ու գռեհիկ սովորույթները, որոնցով ստորացվում է կանանց արժանապատվությունը, եւ աշխատանք տանել՝ փոփոխելու այն օրենքները, որոնք կանանց չեն թույլատրում լիովին վայելել իրենց իրավունքները։
- Ընտանեկան միջավայրում մեծանալու, սնվելու, կրթվելու եւ օգնություն ստանալու երեխաների հիմնական իրավունքների պաշտպանությունը ընտանիքի եւ հասարակության պարտականություններից մեկն է։ Այդ իրավունքները պետք է երաշխավորվեն ու պաշտպանվեն, որպեսզի չանտեսվեն եւ աշխարհի ոչ մի մասում ոչ մի երեխա դրանցից չզրկվի։ Հարկավոր է դատապարտել որեւէ գործողություն, որով վնաս է հասցվում երեխաների արժանապատվությանը եւ խախտվում են նրանց իրավունքները։ Ինչպես նաեւ կարեւոր է հսկել այն վտանգների դեմ, որոնց նրանք ենթարկվում են – հատկապես թվային միջավայրում – , եւ որպես ոճրագործություն նկատել նրանց

անմեղության դեմ գործված որեւէ գործողություն եւ նրանց մանկական աշխարհի դեմ կատարված որեւէ ոտնձգություն։

- Տարեցների, տկարների, հաշմանդամների եւ ճնշվածների իրավունքների պաշտպանությունը կրոնական եւ հասարակական պահանջ է, որ պետք է երաշխավորված ու պաշտպանված լինի խիստ օրենքներով եւ այդ խնդրի վերաբերյալ ստորագրված միջազգային համաձայնագրերի գործադրումով։ Այդ նպատակին հասնելու համար, Կաթոլիկ Եկեղեցին եւ Ալ-Ազհարը, ընդհանուր համագործակցության միջոցով, հռչակում եւ խոստանում են հասցնել այս Վավերագիրը ամբողջ աշխարհի Իշխանություններին, ազդեցիկ Առաջնորդներին, կրոնի այրերին, տարածաշրջանային եւ միջազգային իրավասու կազմակերպություններին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, կրոնական կազմակերպություններին եւ մտքի առաջնորդներին. եւ հանձն են առնում տարածել այս Հայտարարության սկզբունքները տարածաշրջանային եւ միջազգային բոլոր մակարդակներում, հորդորելով վերածել դրանք քաղաքականությունների, որոշումների, օրենսդրական գրությունների, ուսման ծրագրերի եւ հաղորդակցության նյութերի։ Ալ-Ազհարը եւ Կաթոլիկ Եկեղեցին հորդորում են, որ այս Վավերագիրը ուսումնասիրության եւ խորհրդածության առարկա դառնա բոլոր դպրոցներում, համալսարաններում եւ դաստիարակչական ու կրթական բոլոր հաստատություններում, որպես նպատակ ունենալով նպաստելը՝ ստեղծելու նոր սերունդներ, որոնք կրողները կլինեն բարու եւ խաղաղության, եւ ամենուր կտարածեն ճնշվածների ու վերջինների իրավունքները։ Վերջում մաղթում ենք, որ. այս Հայտարարությունը հրավեր լինի բոլոր հավատացյալների միջեւ հաշտության ու եղբայրության, մանավանդ թե՝ հավատացյալների ու անհավատների միջեւ, եւ բարի կամքի տեր բոլոր մարդկանց միջեւ. մի կոչ լինի, ուղղված՝ կենդանի խիղճ ու գիտակցություն ունեցող յուրաքանչյուր մարդու, որ մերժում է անբնական ու մոլորեցնող բռնությունը եւ կույր էքստրեմիզմը. մի կոչ բոլոր նրանց, ովքեր սիրում են հանդուրժողության ու եղբայրության արժեքները, որոնք պաշտպանվում ու խրախուսվում են կրոնների կողմից. լինի մի վկայություն, թե քանի՛ցս մեծ է Աստծո հանդեպ հավատքը, որ միավորում է բաժանված սրտերը եւ վերամբարձում է մարդկային հոգին. մի խորհրդանշան լինի Արեւելքի ու Արեւմուտքի, Հյուսիսի ու Հարավի միջեւ ողջագուրման, եւ բոլոր նրանց, ովքեր հավատում են, որ Աստված մեզ ստեղծել է, որպեսզի մենք ճանաչենք միմյանց, համագործակցենք միմյանց հետ եւ ապրենք որպես միմյանց սիրող եղբայրներ։ Սա այն է, ինչի հույսը մենք ունենք եւ աշխատում ենք իրականացնել, հասնելու համար համընդհանուր խաղաղության, որի պտուղները բոլոր մարդիկ կկարողանան վայելել այս կյանքում։

Աբու Դաբի, 4 Փետրվար 2019թ.

Նորին Սրբություն
ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊ

Ալ-Ազհարի Մեծ Իմամ
ԱՀՄԱԴ ԱԼ-ԹԱՅԻԲ